ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այս վերջին տարիների ընթացքում գեղեցիկ ավանդույթ է դարձել Մայր Աթոռում քահանայից հանդիպում հրավիրելը:

Այս տարի Մայր Աթոռ էին ժամանել Արարատյան, Շիրակի, Վրահայոց, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի ներքին թեմերից շուրջ 50 քահանա հայրեր:

Այս հանդիպմանը մասնակցեցին ոչ միայն Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքից տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանը և տ. Բակուր արդ. Ջաղբյանը, Կ. Պոլսի պատրիարքությունից՝ տ. Թաթուլ քհն. Մալխասյանը և տ. Հարություն քհն. Հալաճյանը, ԱՄՆ-ի հայոց թեմից՝ տ. Լևոն վրդ. Աբելյանը:

Քահանայական հանդիպմանը մասնակցում էին նաև Մայր Աթոռի միաբաններն ու սարկավագները:

Հոկտեմբերի 10-ին հանդիպման մասնակիցները ներկա են լինում Մայր տաճարում առավոտյան ժամերգությանը, որից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել բոլորին:

Ընդունելությանը ներկա են լինում նաև ոչ միայն Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում քահանայական հանդիպման համար ժամանած բոլոր ներկաներին և խնդրում տալ Իր օրհնությունը՝ կատարվելիք աշխատանքների հաջողության համար:

Վեհափառ Հայրապետը սիրով ողջունում է բոլորին և տալիս Իր օրհնությունն ու հայրապետական պատգամը՝ շեշտելով նման հանդիպման հոգևոր նշանակությունը մեր եկեղեցու կյանքում:

Հոկտեմբերի 11-ին, չորեքշաբթի օրը, Մայր տաճարում, առավոտյան ժամերգությունից հետո, հոգևոր ճեմարանի դահլիճում սկսվեցին դասախոսությունները տ. Տիրան արքեպ. Ներսոյանի աղոթքով և նախագահությամբ:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Առաջին օրը կարդացվեցին հետևյալ դասախոսությունները.

ա) «Հայ հոգևորականի հովվության բնույթը Ամերիկայի Միացյալ Նահանգներում», զեկուցող՝ տ. Լևոն վրդ. Աբելյան (Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմ).

բ) «Հայ անգլիկան եկեղեցին», զեկուցող՝ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյան (Մայր Աթոռ ս. Էջմիածին):

Հոկտեմբերի 12-ին գումարվեց երկրորդ նիստը՝ տ. Տիրան արքեպ. Ներսոյանի նախագահությամբ:

Այս նիստում կարդացվեցին հետևյալ դասախոսությունները.

ա) «Հայ Երուսաղեմը», նկարների ցուցադրությամբ, զեկուցող՝ տ. Կյուրեղ ծ. վրդ.

Գաբիկյան (Երուսաղեմի ս. Հակոբյանց ուխտից).

բ) «Խաղաղությունը և հայ եկեղեցին», զեկուցող՝ տ. Եղիշե քհն. Բաղրամյան (վանահայր ս. Հռիփսիմե վանքի).

գ) «Լսիր, ո՛վ Տեր, աղոթքը մեր ողբաձայն», զեկուցող՝ տ. Սարգիս քհն. Թաշճյան (Երևանի ս. Սարգիս եկեղեցի):

Հոկտեմբերի 13-ին գումարվում է հանդիպման երրորդ նիստը և կարդացվում են հետևյալ դասախոսությունները.

ա) «Կ. Պոլսի հայ եկեղեցական և մշակութային կյանքը», զեկուցող՝ տ. Հարություն ավագ քհն. Հալաճյան (Կ. Պոլսի հայոց ս. Վարդանանց եկեղեցի).

բ) «Հայաստանյայց Մայր եկեղեցին», զեկուցող՝ տ. Տիրայր քհն. Կոնսուլյան (Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցի):

Յուրաքանչյուր նիստում զեկուցումներից հետո տեղի էին ունենում մտքերի փոխանակություն: Զեկուցողները պատասխանում էին ներկաների հարցերին, իսկ նախագահող տ. Տիրան արքեպիսկոպոսը վերջում ամփոփում էր զեկուցումների առթիվ արտահայտված մտքերը և անում մի շարք օգտակար թելադրություններ:

Հոկտեմբերի 13-ին, ուրբաթ օրը, երբ ավարտվեցին զեկուցումները, հանդիպմանը մասնակից բոլոր ներկաները խմբովին ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Սրբության օրհնությունը:

Տ. Հովհաննես քհն. Մարուքյանը համառոտակի կերպով Վեհափառ Հայրապետին զեկուցեց հանդիպման աշխատանքների մասին և խնդրեց Նորին Սրբությանը՝ տալ Իր օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը տալիս է Իր օրհնությունն ու պատգամը՝ շեշտելով հատկապես քահանայից դասի հոգևոր ծառայության կարևորությունը հայ հավատացյալ ժողովրդի կրոնական և հայրենասիրական դաստիարակության գործում:

Բոլոր ներկաները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությունները և վերադառնում իրենց պաշտոնատեղին: